

Ա. ՆԵՎՐԱՍՈՎ

ԳՅՈՒՆԿՈՈՊԵՐԱՅԻՆԱՅԻ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԶԻԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԳՅՈՒՆԿՈՈՊԻ



Ա. ՆԵԿՐԱՍՈՎ


ԳՅՈՒՂԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԶԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԽԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

-16760
A II
23599



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊԻ

ՀԱՅՊՈՒԳՐԱՅԻ I ՏՊԱՐԱՆ

Գրանկարգ, խմբար 1826 թ. Գտնվելը 2891
Տիրամ 1500

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սորհրդային պայմաններում աշխատող գյուղատնտեսական կոոպերացիան իր առաջ դնում է հետևյալ հիմնական խնդիրները՝ ա) գյուղատնտեսութան արտադրողականութան բարձրացումը, բ) չքավոր և միջակ գյուղացիներին փոխադարձ ոգնութան գործի կազմակերպումը և գ) գյուղացիական տնտեսութան վերակառուցումը՝ կոլլեկտիվ (արտելային) հիմունքներով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Մեր գյուղատնտեսութան հետամնացությունը բույրի համար միանգամայն անվիճելի և ակներև փաստ է: Մեր գյուղում կան խոշոր քանակությամբ գյուղացիներ, վորոնք իմպերիալիստական պատերազմի ժամանակ յեղել են արտասահմանում, վորպես ռազմագերիներ աշխատել են դերմանական գյուղադաշտերում և ծանոթացել են, թե ինչպես է տարվում գյուղատնտեսությունն այլ յերկրներում: Այդ աշխարհ տեսած մարդիկ կարող են պատմել և պատմում են իրենց համագյուղացիներին շատ հետաքրքիր և նոր բաներ: Բացի այդ, գյուղացիություն համար հրատարակվող մեր թերթերում և ամսագրերում շատ հաճախակի յեն պատահում գիտողություններ՝ թե Արևմտյան Յեվրոպայի և ամերիկական գյուղացիների աշխատանքի պայմանների մասին և թե ինչպես է դրված գյուղատնտեսությունն արտասահմանում:

Մեր գյուղատնտեսությունն Արևմտյան Յեվրոպայի—որինակ՝ Գերմանական գյուղատնտեսության հետ համեմատելիս, ամենից առաջ աչքի յե ընկնում մեր

յանքերի բերքի սակավութիւնն ու քշութիւնը: Ինչ
 բույս ել վերցնենք՝ հատիկային կուլտուրա կամ թե-
 կարտոֆիլ, մենք կտեսնենք, վոր մեծ տարբերութիւն
 կա մեր և Արեմտյան Յեվրոպայի միջև: Յեթե մենք
 Սորհրդային Ռուսաստանի կենտրոնական գոտում հա-
 տիկային բույսերի մեկին—հինգ, մեկին—վեց բերքը հաշի-
 վում ենք միջակ, Արեմուտքում միջակ բերքը համար-
 վում և մեկին—տասը, մեկին—տասներկու: Գետնախնձա-
 րը, վոր մեզ մոտ տալիս և մեկին—չորս, մեկին—հինգ,
 Արեմտյան Յեվրոպայում հասնում և մեկին—տասներ-
 կուսի, մեկին—տասնհինգ:

Նույնպես գրութիւն և նույնպիսի խիստ տարբե-
 րութիւն մենք կարող ենք տեսնել նաև կաթնատնտե-
 սութիւնն ընդամասնում: Մեր մի կովի տարվա միջին
 կիթը չի անցնում վաթսուն—ութսուն գույլից, այն ինչ
 գանձական, կամ հոլանդական կովը տալիս և յերեք-
 չորս հարյուր, իսկ ավելի լավ անտեսութիւններում՝
 անգամ մինչև վեց հարյուր գույլ:

Մի խոսքով, Արեմտյան Յեվրոպայի և ամերիկա-
 կան գյուղացու անտեսութիւնը մերից տարբերվում և
 թե մեծ կուլտուրականութեամբ և թե մեծ շահավե-
 սութեամբ (պատվեւտութեամբ):

Մինչդեռ կապիտալիստական յերկրներում գյուղա-
 ցիւթիւն չբավոր և միջակ յերակերի իրավական գրու-
 թիւնը շատ ծանր և: Դա վոչ մի կերպ չի կարելի հա-
 մեմատել մեր՝ Սորհրդային Միութիւնն գյուղացիական
 նույն յերակերի իրավական գրութիւնն հետ, վորտեղ իշ-
 խանութիւնը պատկանում և իրենց՝ աշխատավորնե-
 րին և վորտեղ նրանք իրենք են անորինում իրենց բախ-
 տը: Փոխել գյուղատնտեսութիւնն մեջ գոյութիւնն ունե-
 ցող ներկա կարգերը, դուրս քշել գյուղից արտըն ու գե-
 րանդին, վերացնել հողացրվածութիւնը և մանր—մու-
 նրը, արշին ու կեսանոց հողամասերը, գյուղ ներմուծել
 արակատր, շարքացան, կալսիչ մեքենա, հանքային պա-
 րարտանյութեր, կառուցել անասունների լավ գոմ, կի-
 բառել անասունների լավացված կերակրում, խորացնել
 գյուղացիութիւնն մեջ գյուղատնտեսական ազրոնոմ իս-

կան գիտելիքները, — ահա սա յի առաջին հիմնական խնդիրը, վորը դրված է խորհրդային գյուղատնտեսական կոոպերացիայի առաջ:

Խորհրդային Միությունում այդ խնդրի լուծումը հեշտանում է նրանով, վոր մեզ մոտ գոյություն չունի շահագործում և իրավազրկություն, ինչպիսիք տեղի ունեն կապիտալիստական յերկրներում: Գյուղատնտեսության զարգացումը մեզնում պետք է ընթանա ավելի արագ և ուժեղ, քան մյուս յերկրներում:

ԶԲԱՎՈՐ ՅԵՎ ՄԻՋԱԿ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՓՈՒԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿՍՁՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Սակայն գյուղացիներն ուժ կունենա՞ն արդյոք միայնակորեն վերակառուցել իրենց գյուղատնտեսությունը: Նրանց հիմնական մասի համար անկասկած դա չառ գժվար կլինի: Գյուղական տնտեսությունը հասցնել բարձր աստիճանի, կարող են միայն շատ ունևորները, իսկ չքավոր ու միջակ գյուղացիները դա կարող են ավելի արագ և ճշտությամբ անել միայն ընկերություններում և արտելներում միանալու, միայն գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով:

Մեր, Խորհրդային յերկրներում գյուղատնտեսական կոոպերացիան լայն շափով տարածվել և բավականաչափ զարգացել է: Այժմ գժվար թե ճարվի մի շքրջան, վորտեղ չաչխատի վորևէ կոոպերատիվ միությունը: Մի շարք շքջաններում գյուղացիությունը համարյա գլխավին կոոպերացված է գյուղկոոպերացիայի այս կամ այն միությունում: Վերջին տարիներում գյուղկոոպերատիվ միավորները զգալիորեն ամրացել են, ձևոր են բերել աչխատանքի փորձառություն, կատարել են միջոցների մասնակի կուտակում, ունեն իրենց կազմում քիչ թե շատ փորձված գեկավարներ՝ չքավոր ու միջակ գյուղացիության շարքերից, համախմբել են իրենց շտրջր ակտիվ ու առաջադեմ գյուղացիների և մի շարք սայոններում անցել են լուրջ ազրեկուլտուր աչխատանքների, այսինքն իրենց անգամների տնտեսությունն բարձր աստիճանի հասցնելու աչխատանքների:

Սակայն առաջին հերթին ո՞ւմ պետք է ներգրավեն և սպասարկեն այդ գյուղ-կոոպերատիվ միությունները:

Յեկ ահա գյուղատնտեսական կոոպերացիայի յերկրորդ հիմնական խնդիրը հանդիսանում է՝ չքավոր ու միջակ գյուղացիության փոխադարձ ոգնության կողմակերպումը:

Գյուղատնտեսական ընկերություններն իրենց գրյխավոր ու շաղրությունը պետք է դարձնեն չքավոր գյուղացու, գեղջկուհու, այրի կանանց ոգնության, նրանց տնտեսության վերականգնման դորժին: Կազմակերպչները և գյուղատնտեսական կոոպերատիվների ղեկավարներն առաջին հերթին պետք է անդամագրեն գյուղի ամենակարիքավոր շերտին և միջակ գյուղացիներին, վորոնք ձգտում են յավացնել իրենց աշխատավորական տնտեսությունը:

Գյուղի այդ շերտերը դուրս մնալով կոոպերատիվից և գյուղատնտեսական ընկերությունից, կարող են յենթարկվել կուլակի, վաշխատունների շահագործման, վորոնք մեկ մոտ գեռ չի մեռել, խորամանկորեն ձգտում են իրենց ցանցի մեջ ձգել աշխատավորին:

Իսկ գյուղատնտեսական ընկերության միջոցով չբաժնորները և միջակները կարող են բարձրացնել իրենց տնտեսությունը, յավացնել իրենց բարեկեցությունը և ավելի հեշտությամբ խուսափել կուլակի շահամոլ և գիշատիչ ճանկերից:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԿՈՒՆԵԿՏԻՎ (ԱՐՏԵԼԱՅԻՆ) ՇԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ

Գյուղատնտեսական կոոպերացիան ոգնում է իր անդամներին՝ բարձրացնելու իրենց տնտեսության մակարդակը, ավելացնելու բերքատվությունը և կիթր տնտեսության մեջ, ըստ վորում այդ ոգնությունն առաջին հերթին ցույց տրվում է չքավոր տնտեսություններին: Սակայն մեծ սխալ կլինի գյուղատնտեսական կոոպերացիայի կողմից, սահմանափակել իր աշխատանքը միայն այս յերկու խնդիրներով:

Հասցնել բարձր աստիճանի քսան հինգ միլիոն ցրված ու մանր գյուղական տնտեսությունները—սա բացառիկ զժվարին խնդիր է :

Մեր յերկրում կան մոտ ութ միլլիոն գյուղական տնտեսություններ, վորոնցում վոչ միայն հնարավոր չի սպասարծել տրակտոր կամ կալսիչ մեքենա, այլ նրանք զուրկ են անգամ գյուղացիական մի նիհար յեղ գնելու հնարավորությունից : Այդ տիպի տնտեսություններում յեղ պահելը վնաս է . յեղը չի արդարեցնում իրեն, չունենալով լրիվ բեռնավորում :

Միանգամայն ակներև է, վոր նման գյուղացիական տնտեսությունների բոլոր ջանքերը՝ ցրված և միայնակ ձևով հասնել ավելի բարձր աստիճանի—համարյա անհուսալի յէ : Նրանց համար միակ յեղքն այն է՝ միանալ բնկերություններում, արտելներում և կամ կազմակերպել կոլլեկտիվ տնտեսություններ :

Գրա համար գյուղատնտեսական կոոպերացիայի յերբորդ և ամենագլխավոր խնդիրն է հանդիսանում՝ մեր գյուղատնտեսության լրիվ վերակառուցումը և դրա փոխանցումը կոլլեկտիվ, արտելային ու յեղքերի վրա :

Սորճրգային գյուղատնտեսական կոոպերացիան ձգտում է գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպել նույն հիմունքներով, ինչպես կառուցված է սոցիալիստական արդյունարերական տնտեսությունը քաղաքներում, միայն այն տարրերությամբ, վոր Փարրիկաները և գործարանները տվյալ Փարրիկայի կամ գործարանի բանվորների կոլլեկտիվի սեփականությունը չեն, այլ կազմում են Սորճրգային Միության ամբողջ աշխատավորության սեփականությունը :

Իսկ գյուղում գյուղատնտեսական կոոպերացիան խնդիր է գնում կազմակերպել հացի, բամբակի և այլ յուրահատուկ գործարաններ, վորոնք (բացի հողից) կալատիանեն իրենց կոլլեկտիվ դաշտերում աշխատող և համապատասխան կանոնադրությամբ միացված մի յումբ գյուղացիների :

Սակայն, չնայած այս տարրերության, աշխատանքի պայմանները և աշխատանքի կազմակերպումը կու-

նենա համարյա միևնույն բնույթը: Ինչպես բանվորը
 գործարանը չհամարելով իր անձնականն ու սեփականը,
 իր ամբողջ ուժն ու յեռանդը տրամադրում է պետական
 ձեռնարկութեանը և դա բոլորովին չի պակսեցնում նրա
 յեռանդն ու աշխատասիրութեանը, այնպես էլ գյու-
 ղում՝ իմ տնտեսութեան, իմ բաժին հողամասի, իմ
 ձիու փոխարեն պետք է լինի՝ մե՛ր տնտեսութեանը, մե՛ր
 արտը, մե՛ր ձին, և դա բոլորովին չպետք է պակսեցնի
 արտելում կամ կոլեկտիվում աշխատող գյուղացու յե-
 ռանդն ու աշխատասիրութեանը:

Մի խոսքով, գյուղատնտեսական կոոպերացիայի
 գլխավոր նպատակն է՝ կազմակերպել գյուղում սոցիալ-
 լիստական (համայնական) տնտեսութեան:

Թե առաջին յերկու խնդիրները և թե մանավանդ
 յերրորդ գլխավոր խնդիրը գյուղատնտեսական կոոպե-
 րացիայի կողմից կիրադործվեն միայն այն դեպքում,
 յեթե նրան ողնի պետական սոցիալիստական խոշոր ար-
 գյունարերութեանը, յեթե գյուղի վերակառուցմանը,
 գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքներին
 ղեկավարի Համախոլթենական Կոմ. կուսակցութեանը,
 վորին նրա ստեղծող, ղեկավար և ուսուցիչ Վ. Ի. Լե-
 նինը կտակել է՝ հետամնաց, կիսաքաղցած և մութ
 գյուղը՝ վճռական և անչեղ կերպով տանել դեպի լավ,
 կուշա, կուլտուրական մարդկային կյանք, տանել դեպի
 սոցիալիզմ:

**ԻՆՁ ՆՈՐ ԲԱՆ Ե ԱՍԵԼ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԿՈՒՍԱԿ-
 ՅՈՒԹՅԱՆ XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
 ԿՈՊՊԵՐԱՑԻՅՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Գյուղատնտեսութեան և գյուղատնտեսական կոոպե-
 րացիայի խնդիրներն այս կամ այն ձևով դրված են յե-
 ղել և դրված են Հ.Կ.Կ. բոլոր Համագումարներում:
 Մասնավորապես Կոմկուսակցութեան 15-րդ համագու-
 մարը գյուղկոոպերացիայի աշխատանքի խնդիրներին
 առանձին և բացառիկ ուշադրութեան է նվիրել:

Համագումարը ամփոփեց այն բոլորը, ինչ արված
 է գյուղում Կոմ. կուսակցութեան կողմից, յերկրի ու-

սաջ յուսարանեց զյուզի խորքերում կատարվոյ պրո-
ցեսսները, սպա նշեց այն ուղիները, վորոնցով հեա-
զույում պետք է ընթանա գյուղական բոյոր կազմակեր-
պությունների աշխատանքները, նույն թվում և զյուզ-
կոտպերացիայի աշխատանքները:

15-րդ համագումարը նշեց՝ վոր գյուղատնտեսական
կոտպերացիան մինչև այժմ չբջանների մեծ մասում իր
խնդիրն և համարել զյուզացիության չքափոր և միջակ
մաստային ներգրավել իր շարքերը, իր անդամներին
սպասարկել վարկավորման, հայթայթման, վաճառա-
հանման ու մատակարարման բնագավառում, վոր միայն
հատ ու կենտ տեղերում և սկսված գյուղատնտեսության
արտադրության բարձրացման աշխատանքը և գյուղա-
տնտեսական ընկերությունների կողմից համարյա աշ-
րաթոյ և արված չքափորությանը նյութական-տնտեսա-
կան ոգնություն ցույց տայու աշխատանքը, և վոր գյու-
ղատնտեսական կոտպերացիան շատ դանդաղ և թույլ և
զնում դեպի իր գլխավոր նպատակի իրականացումը—
գյուղացիական տնտեսությունների կոլլեկտիվացումը:

Ավելի մեծ ուշադրություն, ավելի մեծ ոգնություն
չքափորին, ավելի ուժեղացնենք գաշինքը միջակի հեա-
տվելի վճռական դիմադրություն կուլակին, ավելի հա-
մարձակ դեպի խոշոր կոլլեկտիվ տնտեսություն—սրանք
են ահա կոմ. կուսի 15-րդ Համագումարի հիմնական
նշանարանները, վորոնք առաջադրված են գյուղատն-
տեսական կոտպերացիային:

Այն հարցի լուսարանումը, թե գործնականում
գյուղատնտեսական կոտպերացիան ինչպես պետք է ա-
րադացնի զյուզի առաջարժումը դեպի համայնական,
կոլլեկտիվ—սոցիալիստական տնտեսություն, —բարդ և
խոշոր գործ է: Ներկա գրքի եջերում այս հարցի վրա
ավելի մանրամասն կանգ առնելու հնարավորություն
չունենք, քանի վոր այս գրքի նպատակն և քննության
յենթարկել ուրիշ կարևոր և լուջ հարց—գյուղկոտպե-
րացիայի կողմից չքափորության մեջ տարվելիք աշխա-
տանքի կարգի մասին:

ՀԻՍՆԱԿԱՆ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ ՉՔԱՎՈՐՈՒՅՑԱՆԸ ՆՅՈՒԹԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Չի կարելի ասել, վոր գյուղատնտեսական կոոպերացիան մինչև այժմ գյուղի շքավորութեանն ոգնութեան ցույց չի ամէլ:

Այդ ոգնութեանը յեղել է: Ոգնութեան արված է: Չքավոր գյուղացուն ոգնել են և վարկով, և դութանով, և գյուղատնտեսական մեքենաներով:

Սակայն, շատ հաճախ, թե վարկ, թե դութան և թե գյուղատնտեսական մեքենա ստացող այդ շքավորը արնտեսապես բարձրացել և շավիղց դուրս թույլ և դանդաղ:

Ոգնութեան նման արդյունքն առիթ է տալիս գյուղի կուլակի և անեօրի կողմից հետեյս խոսակցութեանը.—

«Սորճրդային իշխանութեանը ոգնում է ճրիակերներին և ծուլերին, ոգնում է իզուր, վորովհետև մինչև նույն և նրանցից ոգուտ չես ստանա»: Նման խոսակցութեանները մեծ կասկածներ են ստեղծում նաև առանձին միջակ գյուղացիներին մեջ: Ստեղծվում էր մի տեսակ դժգոհ արամազրութեան, վոր իրը թե Սորճրդային Իշխանութեանն այն միջոցները, վորը տալիս է շքավորներին, լավ կլիներ, յեթե արամազրեր միջակային աշխատավորական տնտեսութեաններին,— այն ժամանակ և միջոցները չեյին վոչնչանա և ամէլի շատ ոգուտ կլիներ:

Նրանք մտածում են—«Սա ինչ բան է, գյուղացի Սիմոնին ամեցին լծկանի վարկ, ոգնեցին նրան յծկան տանելու, մի շարաթ անցավ, յերկրորդում լծկանը սատկեց: Լծկանը չկա, իսկ վարկն էլ հեռ ստանալը բավականին դժվար է: Նույն Սիմոնին արտոնյալ յերկարատե վարկի կարգով ամեցին նոր «Սակկա» մարկայի դութան, իսկ այժմ այդ դութանը, ստանան գիտե, թե վորտեղ ընկած ժանգոտում ու փչանում է: Ել ինչպիսի արնտեսավոր է Սիմոնը, յերբ նա չկարողացավ լավ խնամել լծկանին, իսկ դութանը պահել ինչպես հարկն է: Արդյոք

ճիշտ և վարվում Կոմկուսակցությունը և Խորհրդային Իշխանությունը, յերբ գյուղում աշխատող բոլոր կադմակերպություններից պահանջում և չքավոր գյուղացիներին առաջնակարգ արտոնություններ և սպասարկում ցույց տալը: Սիմոնի նման որինակներ գյուղում հազմագյուտ չեն:

Կարելի չէ բազմաթիվ որինակներ բերել, յերբ չքավոր գյուղացուն շինարարության համար փայտ են տալիս, բայց նա վաճառում և հարեանին և ինքը մնում և նույն կիսաքանդ խրճիթում, կամ յերբ չքավորին տալիս են մաքուր, լավ սերմացու, իսկ նա ցանում և կեղտոտը, փչացածը, կամ բոլորովին չի ցանում, քանի վոր սերմելու ժամանակ նա չի ունենում վոչ լավ, վոչ վատ, վոչ ընկերությունից ստացած և վոչ ել սեփական սերմացու:

Ինչումն և գործը:

Մի գուցե արդարացի յեն գյուղի կուլակ-փափապողները, վորոնք խոսում են չքավորին տրվող ոգնության անմտության մասին, մի գուցե արդարացի յեն և այն առանձին միջակները, վորոնք սկսում են մեծ կասկածանքով և թերահավատությամբ մտանալ չքավորության: Մի գուցե Կոմ. Կուսը և Խորհրդային Իշխանությունն իսկապես սխալվում են՝ գյուղի չքավորությանը առաջին հերթին ոգնության ցույց տալով:

Իհարկե վոչ:

Կոմկուսակցությունը և Խորհրդային Իշխանությունը ճիշտ են վարվում, յերբ գյուղական կազմակերպությունների ուղադրությունն ու ջանքերն ուղղում են չքավոր գյուղացիների ոգնության գործին: Յե՛վ մենք ակննում ենք, ինչպես և գնում չքավորների արնտեսության զարգացումը՝ նրանց ցույց տրված ոգնության հետևանքով: Ամբողջ հարցը կայանում և նրանում, վոր առանձին չքավոր գյուղացի Սիմոնին տրված ոգնությունը բավական չի յեղել նրա անտեսությունը վորտի կանգնեցնելու համար: Սիմոնի լծկանը սատակեց վոչ թե նրա համար, վոր Սիմոնը վատ, ձրիակեր,

ծուլլ տնտեսավար ե, ալլ նրա համար, վոր Սիմոնի ստացած վարկը բավականացրեց միայն լծկան տնտեսուն, իսկ կերակրելու համար նա վոչինչ չուներ, և վերջապես տեղ ել չկար կապելու. նա գոմ չունի. նա պետք ե խրճիթի հետևում մի աղքատիկ ծածկոց շիներ և լլծկանը պաշտպաներ վատ յեղանակներից: Հակառակի պես այն շարաթը, յերբ Սիմոնի վատ կերակրած լծկանը կանգնած եր անպետք ծածկոցի տակ յեղանակները վատացան, լծկանը չկարողացավ դիմանալ և սատկեց:

Լծկան ունենալը Սիմոնի ուժից վեր դուրս յեկավ: Նա վոչ միայն չփրկեց Սիմոնի տնտեսությունը, ալլ վերջնականապես քայքայեց նրան ու Սիմոնը առաջվա նման լծկան չունի և հարյուր քսան ուրլի պետք ե վրձարի «Վարկոսպին»:

Այն չքավոր գյուղացին, վորը ծախեց արտոնյալ պայմաններով ստացած շինությունը, այդ արեց վոչ թե իր ծուլության ու անտնտեսավարության հետևանքով և ցանկացավ ապրել մութ, կիսաքանդ խորճիթում, ալլ այն պատճառով, վոր ընտանիքը կերակրելու համար, նրան առաջին հերթին հարկավոր եր կավ, վորը գնելու համար նա Վարկոսպից չկարողացավ վարկ ստանալ:

Կան, իհարկե, գյուղում հարբեցողներ, ճրիակերներ և ծուլեր: Կոմ. կուսակցությունը և Սորհրդային իշխանությունը հոգ են տանում վոչ նրանց մասին. գյուղի չքավորության հիմնական մասսան նրանք չեն կազմում: Այդ գիտի ամեն մի ազնիվ աշխատավոր գյուղացի:

Չքավոր գյուղացիների հիմնական մասսան կազմող սակավահողները, առանց աշխատավորի կամ հիվանդ ու հաշմանդամ միակ կերակրող ունեցող բաղմանդամ ընտանիքներն յերեք չեն մտածում՝ ծուլության, հարբեցողության կամ ճրիակերության մասին:

Գյուղացիության այդ մասսայի տնտեսության մեջ պետք ե միայնգամից յերկար ժամանակով խոչոր միջոցներ գնել, քանի վոր փոքր ոգնությունն ու սթանդակությունը միշտ ել դուրս չի բերում ծանր կացությանից:

Ամեն մի չբաժնոր անասութեան մեջ միանգամայն մտցնել խոշոր միջոցներ այն ժամանակ, յերբ չբաժնորներն թիվը Սորհրդային Հանրապետութեաններում հասնում է մինչ աստու միլիոնի—սա անիրագործելի խնդիր է: Յեւ բացի այդ, նման ոգնութեան և աջակցութեան գեղքում գյուղի զարգացումն ու վերելքը կնխանա շատ զանգազ, քանի վոր գյուղատնտեսութեան նման դարգացումը կգնար միայնակ, կամ ինչպես ասում են, անհատական հիմունքներով:

Մինչ զես կամունիստական կուսակցութեան և Խորհրդային Իշխանութեան նպատակն է կազմակերպել այնպիսի գյուղատնտեսական արտադրութեան, վորը կարող կլինի զարգանալ հեշտ ու արագ, և տնտեսական բարձր մեղելքի համար կունենան բոլոր տվյալները. Հեռեապես գյուղական չփավարութեան տնտեսականնյութական ոգնութեան, պետք է կազմակարպված լինի մի էիչ այլ հիմունքներով. առանձին չփավար տրնտեսութեան ոգնելուն զուգընթաց հիմնական ուշադրութեան պետք է դարձնել համալսմբելու չփավար գյուղացիներին համայնական, ընկերային և արտելային տրնտեսութեաններում, սկզբում թեկուզ ամենահասարակ ձևի, իսկ այնուհետև գյուղատնտեսական ընկերութեան և չբնագատուց կազմակերպութեաների հետագա ոգնութեամբ, այդ պարզ կոյեկտիվ միութեանն ինքը կանդնի կոյեկտիվացման ասելի բարձր աստիճանի:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԽՆԴԻՐԸ
ԶՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ—
ԶՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՈՊԵՐԱՑՈՒՄՆ Ե**

Գյուղատնտեսական կոոպերատիվը բարեգործական կազմակերպութեան չէ: Գյուղատնտեսական կոոպերատիվը անտեսական կազմակերպութեան է, վորն աշխատում է ինքնահատուցման և առևտրական հիմունքներով:

Գյուղատնտեսական կոոպերատիվը մի կազմակերպութեան է, վորը բաղկացած է գյուղացիական սնան-

սութ յուններէ ներկայացուցիչ առանձին անդամ—փայտերբերից, վորոնք գյուղատնտեսական կոոպերատիվ են կազմակերպել նրա համար, վոր վերջինը գերազանցապես սպասարկի իր անդամ փայտաբերին, նախ և առաջ սոսնելով գյուղատնտեսութեան արտադրութեան զարգացմանը, ինչպես և առաջին հերթին իր անդամ—փայտաբերի տնտեսութեան դարգայման:

Այս բոլոր հիմունքները մնում են ճիշտ, անվիճելի և անխախտ նաև գյուղատնտեսական ընկերութեան կողմից իր գլխավոր խնդիրներից մեկի, այն է՝ առաջին հերթին չքավոր գյուղացիների սպասարկումն իրագործելու ժամանակ:

Գյուղատնտեսական կոոպերատիվը չի կարող, չբացատր և և իրավունք ել չունի իր միջոցները բաժանել կոոպերատիվին քիչ ծանոթ, կոոպերատիվի հետ վոչ մի կապ չունեցող, կոոպերատիվի գործերի համար վոչ մի պատասխանատուութուն չկրող առանձին գյուղացիական տնտեսութեաններին: Պարզ ասած, գյուղատնտեսական ընկերութեանը չի կարող լուրջ տնտեսական նյութական ունեութուն հասցնել այն չքավոր տնտեսութեաններին, վորոնք այդ կոոպերատիվի անդամ—փայտաբեր չեն: Յեւ վ միայն այն դեպքերում, յերբ իր անդամ—փայտաբերի կարիքն ու պահանջը լրիվ չափով բավարարված կլինեն, իսկ ընկերութեանն ազատ միջոցներ (դրամական կամ նյութական) կունենա, այն ժամանակ միայն ընկերութեանը կարող է՝ վոչ—կոոպերացված չքավոր տնտեսութեաններին վորոչ տնտեսական—նյութական ունեութուն ցույց տալ: Սակայն այդ կլինի վոչ ինչ ընդհանուր կարգով, այլ վորպես բացառութեան ընկերութեաններում գոյութուն ունեցող կարգ ու կանոնից:

Ի՞նչպես վարվել այդ դեպքում. ի՞նչպես կապել այդ կոմունիստական կուսակցութեան և Խորհրդային Իշխանութեան կողմից չքավորներին ամեն կերպ ոգնելու մասին արված հրահանգների հետ:

Յեւքը շատ պարզ է: Գյուղատնտեսական ընկերութեանն անհրաժեշտ է ներգրավել իր անդամ—փայտաբերի շարքերը շրջապատի գյուղերի չքավոր գյուղացի—

Յերիկն և ընկերութեան աշխատանքներում հիմնական ուշադրութեամբ դարձնել նրանց տնտեսա-նյութական ապաստարկմանը:

Կոմունիստական Կուսակցութեան 15-րդ համագումարը գյուղատնտեսական կոպերացիայի առաջ դրել է հետևյալ խնդիրը. մոտ ժամանակաշրջանում չքավորութեանը հարյուր տոկոսով յենթարկել կոոպերացիան: Ինչպիսիք իր անդամ-փայտերերի շարքը ներդրալիլ չքավոր գյուղացիներին, յերբ նրանց մեծ մասի համար չափազանց դժվար է մուծել մուտքի և փայտվճար, մասնավանդ՝ այդ մուծումները բավականին մեծ են և սովորաբար կազմում են 11 ուրլի (մուտքի՝ մեկ ուրլի և փայտվճար՝ տասը ուրլի):

Վորակից պետք է չքավորը միջոցներ գտնի գյուղատնտեսական կոոպերատիվում անդամագրվելու համար:

Մուտքի վճարը (մեկ ուրլի) չքավորը մի կերպ կարող է ճարել և մուծել: Իսկ ինչ վերաբերում է փայտվճարին, գյուղատնտեսական կոոպերատիվը ինքը պետք է ունութեան գա չքավորին:

Գյուղատնտեսական կոոպերատիվների մեծ Բասում գոյութեան ունի աշպես կոչվող չքավորութեան կոոպերացիան Փոնդ. այդ Փոնդերը կազմվում են լրացուցիչ վճարման Փոնդի մասհանումներից, կոոպերատիվների մարտը շահից, և նպատակը կայանում է նրանում, վոր ունեն դյուղի չքավորութեան անդամագրվելու գյուղատնտեսական ընկերութեան: Չքավոր գյուղացին կարող է գյուղատնտեսական կոոպերատիվի վարչութեանը դիմում տալ և չքավորութեան կոոպերացիան Փոնդից փոխառութեան խնդրել իր անդամութեանն ընկերութեանում ձեռնարկելու համար: Դիմումի հետ պետք է ներկայացվի մուտքի վճարը: Յեթե կոոպերացիան Փոնդը ընկերութեանում չի սպառված, յեթե դիմող չքավորը հայտնի յե տեղի հասարակական և պետական կազմակերպութեաների վորպես իրոք աշխատավոր գյուղացի, այդ դեպքում չքավոր գյուղացու դիմումը կարելի յե բավարարել, և դիմող չքավորի փոխարեն չք-

Բաժնուէրու իրաւունքն կոպերացման Փոնդից մուծվում ե մասա-
փորտակն փայտավարի կեսը*):

Այդ մուծումը նվեր կամ նպատտ չէ, այլ անտուկոյ
յերկարատե (Միութենական Ժողովոմխորհի 28 թ. սեպ-
տեմբերի 7-ի փորոշմամբ վոչ պակաս յերեք տարի ժա-
մանակով) փոխառութիւնն՝ չքաւոր գյուղացուն: Փա-
յտավարի յերկրորդ կեսը վարչութիւնն հատուկ վորոշ-
մամբ նույնպէս հետաձգվում ե յերկար ժամկետով—յի-
րեքից մինչև հինգ տարի: Վարչութիւնն փորոշած ժամա-
նակամիջոցում չքաւոր գյուղացին այդպիսով վճարում
ե փայտավարի մուծման համար իրեն տված վարկը ե
փայտավարի յերկրորդ կեսը մուծում ե իր միջոցներից:

Չքաւոր գյուղացիների կոոպերացումը հեշտացնե-
լու ե նրանց փայտավարի պարտքը մարելու համար,
բացի կոոպերացման Փոնդից տրված փոխառութիւ-
նից, ճիշտ աշխատող գյուղատնտեսական կոոպերատիվ-
ները ցույց են տալիս ե այլ ուղիւթիւն: Չքաւոր գյու-
ղացուն կոոպերատիվը մի վորեւե աշխատանք ե տալիս
ե աշխատավարձի մի մասը պահում՝ նրա փայտավարի
պարտքը մարելու համար: Բացի այդ, գյուղփոկերը
կարող են իրենց միջոցներից մուծել չքաւոր գյուղացու
փայտավարը:

Աշխատանքի այս կարգը ողնում ե չքաւորութիւնը
փոքրի կանգնելու ե ներգրավելու նրան համայնական
արտելային անտեսութիւնն հունի մեջ:

ՆՅՈՒԹԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԲԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Գյուղկոոպերացիայի գծով չքաւորութիւնն մեջ
տարվող աշխատանքի հետեյայ շրջանը, կոոպերացու-
մից հետո՝ հանդիսանում ե չքաւորութիւնն անտեսական
ուղիւթիւնն կազմակերպումը:

Այդ աշխատանքների նպատակն ե՝ բարձրացնել
կոոպերացված չքաւորութիւնն բարեկացութիւնը, նրա

*) Համամիութենական Ժողովոմխորհի 1928 թ. սեպտեմբերի
7-ի փորոշմամբ գյուղատնտեսական կոոպերացիայի շահերից տը-
փող մասահանումը ցածրեկան սահմանված ե 15 տակա:

կուլտուրական մակարդակը և գյուղկոտպերացիայի այն բոլոր աշխատանքները, վորոնք նպաստում են չքավոր գյուղացիութան համախմբմանը՝ պարզ և ավելի բարդ կուլեկտիվներում:

Վորովհետև գյուղատնտեսական կոտպերացիան ունի մի քանի հիմնական ֆունկցիաներ կամ աշխատանքի բնագավառներ, ակներև է, վոր ամենից հարմար էլլինի պարզարանել այն հնարավորությունները, վորոնք ունի գյուղկոտպերացիան իր աշխատանքների առանձին բնագավառներում չքավորության ոգնության համար:

ՎԱՐԿԸ

Գյուղկոտպերացիայի աշխատանքի հիմնական բնագավառներից մեկը հանդիսանում է գյուղատնտեսական արտադրության վարկավորումը:

Վարկը գյուղատնտեսական կոտպերացիայի ձեռքում կարող է հանդիսանալ և հանդիսանում է չափաչանց ուժեղ, անգամ ամենաուժեղ հենարանը, վորի ոգնությամբ հնարավոր է վերակառուցել ամբողջ գյուղատնտեսական արտադրությունը՝ նոր հիմունքներով: Նա, ում ձեռքում գտնվում է վարկը, միանգամայն ազատ կարող է ոգնել և զարգացնել գյուղատնտեսության արտադրության այս կամ այն ճյուղը, կամ տնտեսության այս կամ այն ձևը:

Պարզենք քիչ ավելի մանրամասն:

Տրամադրելով բոլոր վարկային միջոցները կաթնատնտեսության զարգացման գործին, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կարելի յե տվյալ շրջանում կաթնատնտեսական ճյուղը բարձրացնել և վրոքի կանգնեցնել: Յեթե սկսել առանձնապես ուժեղ և հատուկ արտոնյալ պայմաններով վարկավորելու կուլեկտիվ միություններին (արտելներ, կոմմունաներ), յեթե շրջապատի գյուղացիությունը շահագրգռել հիշած կուլեկտիվների արտոնյալ վարկավորումով, անշուշտ կարելի կլլինի զգալի դրական արդյունքների հասնել՝ թե արդեն գոյություն ունեցող կոլեկտիվներում և թե աջակցել նորերի կազմակերպման:

09791

66552

H



Մի խոսքով, վարկը խեղապես լուրջ ուժ է, վորի ողնութեամբ կարելի չէ ազդել շրջապատի գյուղացիութեան վրա, և այնպէս փոխել գյուղի դեմքը, ինչպիսին անհրաժեշտ է սոցիալիստական հասարակութեան կառուցման համար:

Վարկային ֆունկցիաներ ունեցող գյուղատնտեսական կոոպերատիվներից շատերը պարզ չեն պատկերացնում գյուղատնտեսական վարկի ամբողջ ուժն ու նշանակութիւնը:

Շատ գյուղատնտեսական ընկերութիւններ իրենց վարկային աշխատանքին մոտենում են վորպէս սովորական առևտրական սպերացիայի, նրանք համարում են, վոր դրամը՝ զա ապրանք է, վորը պէտք է շահալիս ստացործել և արգարեցնելով ծախսերը, մի քիչ էլ վաստակել:

Նման ընկերութիւնները վարկային միջոցները, վորպէս փոխառութիւն տրամադրում են ունենար գյուղացիներին, հաշվելով դրամի ոգտագործման այդ ձէն ավելի ապահով իրենց վերադարձնելու տեսակետից, և նշանակում է ընկերութեան համար ավելի ոգտասխտ:

Նման գյուղատնտեսական վարկային ընկերութիւնները վարկային աշխատանքը վոչնչով չի տարբերվում կապիտալիստական, բուրժուական կոոպերատիվները աշխատանքից: Կապիտալիստական յերկրներում վարկը ծառայում է մասնավոր սեփականատիրական և առաջին հերթին խոշոր կալվածատիրական, խոշոր-կուլակային տնտեսութեան զարգացմանը:

Բուրժուական կապիտալիստական կոոպերատիվներում վարկային ոպերացիաներն իրոք հանդիսանում են դրամի առևտրական ոպերացիա և ուղղված են հասարակութեան այնպիսի շերտերի պաշտպանութեանը, վորոնք կապիտալիստական կարգերի հիմքն են հանդիսանում (կալվածատերեր, Փարրիկանաներ, կուլակներ): Սորհրդային գյուղատնտեսական կոոպերացիան, վորը հետապնդում է միանգամայն այլ նպատակներ, այն է համայնական, սոցիալիստական տնտեսութեան կառուցում, յերբեք չպէտք է զբաղվի դրամի առևտրով, ունե-

վորճերը և կոլակները վարկավորումով, ինչպես այդ նկատում և առանձին դեպքերում: Գյուղատնտեսական կուլերատիվների նման թեքումների դեմ կտրուկ կերպով պետք է պայքարել:

Վարկը պետք է ուղղվի առաջին հերթին կուլեկտիվ կազմակերպութայնության ոգևորչան գործին. յերկրորդ՝ անհատ չֆավորական և ապա միջակ գյուղացիական տնտեսութայններին:

Գյուղատնտեսական վարկային բնկերությունը պետք է ոգնի հետամնաց չքավորական տնտեսություններին, թեկուզ մի փոքր լավացնելու իր տնտեսական վիճակը: Մեր յերկիրը բավականաչափ հարուստ է, վոր կարողանա լրիվ բավարարել գյուղի գյուղատնտեսական վարկի կարիքն ու պահանջը: Վարկային միջոցները բաց են թողնվում վոչ բավարար չափով: Գյուղավարկային բնկերություններում միչա ել կան մեծ քանակությամբ վարկով չբավարարված չքավորների դիմումներ: Սակայն սխալ կլինի և այն, յեթե թեքում լինի մյուս կողմը, — յեթե վարկային բնկերությունը վարկային միջոցները բաշխի անդամ-վայատերերի միջև այն հաշվով, վոր վոչ վոքի դժգոհություն պատճառած չլինի:

Նման դեպքում սխալն առաջին հերթին նրանում կլինի, վոր տնտեսական տարրեր շերտի պատկանող գյուղացի անդամ-վայատերերը հավասար չափով վարկ կատանային: Յենթադրենք, վոր թե ունեորը, թե միջակը և թե չքավորը ստանային քանհնդական ուրլի: Միայնդամայն պարզ է, վոր վարկի նման բաշխումը անմտություն կլինի: Ունեորը ստացած դումարը կարող է ոգտագործել իր, առանց այն ել ամուր տնտեսությունն ել ավելի ուժեղացնելու համար, իսկ չքավորին չի բավականացնի անդամ իր ամենաանհրաժեշտ պահանջը բավարարելու համար:

Իացի այդ, այսպիսի հավասարեցուցիչ բաշխումը ճիշտ էեր լինի և նրա համար, վոր փոխառությունը չըն-

չին լինելու պատճառով դրա ազդեցությունը տնտեսութեան վրա չեր յերևա: Դրանով հնարավոր չի մի վորեւ յուրջ գնում (ձի, կով, կամ լավ մեքենա) կատարել: Կարելի չե համոզված լինել, վոր փոքր գումարի փոխառութեանն յերբեք չի ոգտագործվում տնտեսութեան արտադրական նպատակին, այլ ծախսվում ե սպառողականի կարիքների համար:

Այստեղից պարզ ե այն յեզրակացությունը, վոր անհրաժեշտ ե վարկային միջոցները բաշխել առաջին հերթին գյուղացիութեան ավելի կարիք զգացող մասին, այսինքն չքավորներին և այն չափով, վոր տնտեսութեանը զգա այդ փոխառութեան ազդեցութեանը, վոր նա քեկուզ մի աստիճան վեր բարձրանա:

Բավարարել խոշոր վարկով բոլոր կարիք ունեցող անհատական տնտեսութեաններին, ինչպես վերևում ե տսված, — խորհրդային պետութեանը չի կարող. դրա համար նպատակահարմար ե վարկը արամադրել չքավոր կամ միջակ գյուղացիներից կազմած խմբակներին:

Կուլեկտիվին արված վարկի խոշոր լինելու հետեանքով դրական արդյունքներն ավելի շատ կլինեն:

Չքավոր կամ միջակ գյուղացին՝ կուլեկտիվում կամ արտելում աշխատելիս ավելի արագ և ավելի պարզ կզգա իր դրութեան լավացումը, քան այն ժամանակ, յերբ աշխատի առանձին, չնչին միջոցներով և վարկով կառուցի իր տնտեսութեանը: Փոխանակ նրա, վոր տասն անհատ տնտեսութեաններ առնեն տասը գութան (ամեն մեկն մի գութան) կարելի կլինի բավականանալ չորսով, հինգով, յեթե այդ տասը տնտեսութեանը միանան կոլեկտիվում, իսկ մնացած գութաններին տրվելիք դրամը կոգտագործվի տնտեսական այլ կարիքների համար: Գյուղատնտեսական բնկերութեանը կոլեկտիվներին կարող ե և պետք ե բաց թողնի վարկային միջոցներ ավելի շատ գումարով, յերկար ժամկետով և ավելի ցածր տոկոսով, քան անհատական, թեկուզ և չքավորական տնտեսութեան:

Վարկային ընկերութիւնները շատ հաճախակի կատարում են մեկ ուրիշ սխալ, յերբ չքաղորներին տրվող փոխառութիւնը բաց են թողնում ունեւորների յերաշխաւորութեամբ:

Թվում է թէ վոչ մի սխալ բան չկա այստեղ: Վարկը գնում է գյուղացիութեան չքաղոր շերտին: Ընկերութիւնը չի կիրառում հավասարեցման սկզբունքը: Նա միայն ցանկանում է ապահովել փոխառութիւնը ժամանակին և կանոնավոր վերադարձնելը (մարումը):

Թվում է, թէ նման դրութիւնը և ճիշտ է և տնտեսավար:

Սակայն գործնականում այլ բան է դուրս գալիս: Վարկավորման այդ ձևը չքաղոր գյուղացուն շատ հաճախ ուղակի գցում է կուլակիների տնտեսական ծանր ճնշման, ստրկութեան տակ:

Չքաղոր գյուղացին նախ հազար ու մի խնդրանքով ու պաղատանքով պետք է ստանա ունեւոր դրացիների յերաշխաւորութիւնը, և յեթե նրանք հզոր հովանավորողների գթասրտութեամբ կհամաձայնեն յերաշխաւորելու չքաղորին, վերջինը միշտ ել պետք է պարտավոր գգա իրեն, իրավունք չունենալով յերբեք ձայնը բարձրացնելու իր «բարեգործների» վրա, նրանց դեմ դուրս գալ ժողովներում, բացարկել նրանց թեկնածութիւնը խորհրդում կամ կոոպերացիայում և մինչև անգամ դատարանում նրանց դեմ հակառակ վկայութիւն տալ:

Գյուղատնտեսական վարկային ընկերութիւնն այնպես պետք է վարկավորի չքաղոր գյուղացիներին, վոր առաջին հերթին նպաստի նրանց մոտեցման և միացմանը համայնական կողմերով կազմակերպութիւններում, ընդ վորում հասկանալի յե, վոր այդ միացումը պետք է լինի միանգամայն կամովին, հեռու ստիպողական ձևերից: Գյուղատնտեսական վարկային ընկերութիւնը պետք է ոժանդակի և գյուղական անհատ տնտեսութիւնների բարձրացմանը, նրանց քիչ թէ շատ յերկար

ժամանակով՝ ցածր սովորով և զգալի գումարի փոխառ-
վությունն արամադրելով:

Փոխառվությունները ճիշտ ժամանակին և կանո-
նափոր հետ ստանալու համար, ընկերության Վարչու-
թյունը սերտ կապով պետք է կապված լինի փոխառու-
ների հետ, լավ ճանաչի նրանց տնտեսությունը և գոր-
ծակցի գյուղփոկերի հետ:

Բացի սովորական վարկային միջոցներից, վորոնք
կազմում են վարկային ընկերության ընդհանուր ֆոն-
դը, Խորհրդային իշխանության կողմից, թե կենտրո-
նում և թե տեղում կազմված է գյուղի չքավորության
յերկարատե վարկավորման հատուկ ֆոնդեր: Այդ ֆոն-
դը գոյություն ունի բոլոր գյուղավարկային ընկերու-
թյուններում և նշանակված է բացառապես գյուղացիա-
կան չքավոր տնտեսությունների արտադրական արտոն-
յալ վարկավորման համար:

Արտադրական վարկավորում—նշանակում է այն-
պիսի վարկավորում, վորը արամադրվում է բանվոր
անասուն (ձիեր, յեզներ), արտադրական գործիքներ
(գութաններ, փոցխեր մեքենաներ) և արդյունաբերող
անասուն (կովեր, վոչխարներ, խոզեր) գնելու համար:
Վարկի ոգտագործման ժամանակը սահմանվում է յերեք
տարուց վոչ պակաս՝ գյուղատնտեսական ինվենտար և
մանր արդյունաբերող անասուն գնելու համար, և հաս-
նում է մինչև հինգ տարի բանվոր անասուն գնելու
համար:

Նշած ժամանակամիջոցում գյուղացի չքավորը միան-
գամայն ազատ կարող է լավացնել իր տնտեսական գրու-
թյունը և վարկը ժամանակին վերադարձնել:

Ի յրումն սրան, Խորհրդային կառավարության հա-
տուկ Վորոշմամբ չքավորական վարկի տոկոսը սահ-
մանված է տարեկան 6-ից վոչ բարձր: Բացի այդ,
ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի 1928 թ. սեպտեմբերի 7-ի վո-
րոշմամբ, կազմակերպված է չքավորական նոր ե՛լ ա-
վելի արտոնյալ վարկավորման ֆոնդ: Այդ ֆոնդը

կազմվում է հետևյալ կերպ. 1928—29 բյուջեառային տարում անհատական գյուղացիական անտեսությունների վարկավորման համար բաց թողնված միջոցների 40 տոկոսից վոչ պակաս պետք է տրամադրվի չքավոր անտեսություններին, այսինքն պետք է առանձնացվի՝ վորպես չքավոր անտեսությունների վարկավորման հատուկ ֆոնդ: Այդ այդ ֆոնդի կեսը (50 տոկոսը) պետք է ոգտագործվի չքավոր անտեսությունների բացառապես արտադրական կարիքների համար (ձիու, գութանի և այլն), հատուկ արտոնյալ պայմաններով (ոգտագործման ավելի յերկար ժամկետով և վոչ ավել տարեկան 4 տոկոսից):

Վարկային ընկերությունն ունենալով նման ֆոնդ, ավելի ուշադիր պետք է վերաբերվի նրա ճիշտ ոգտագործութանը: Չքավորական ֆոնդը վոչ մի դեպքում չպետք է ոգտագործվի այլ նպատակների համար. դա յենթակա յե քրեական խիստ պատասխանատւության:

ՄԱՏԱԿՄԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գյուղատնտեսական կոոպերացիայի գործնյության յերկրորդ հիմնական բնագավառը հանդիսանում է մատակարարման աշխատանքը:

Գյուղատնտեսական ընկերությունն իր անդամներին մատակարարում է գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ, սերմացու, պարարտանյութեր և գյուղատնտեսության համար անհրաժեշտ մի շարք այլ առարկաներ: Կոոպերատիվի մատակարարման աշխատանքի վորակի հետ է կապված անդամների անտեսական գարգացումն և այդ գարգացման ուղղությունը: Այլ կերպ ասած, յեթե գյուղատնտեսական կոոպերատիվի աշխատանքը լավ է դրված, այդ դրական է անդարագառնում նրա անդամների բարեկեցության մակարդակի բարձրացման վրա: Բացի այդ, ընկերության մատակարարման աշխատանքներից է կախված այն, յե յինչ հիմունքներով, յինչ ուղղությամբ և պարգանում

տվյալ շրջանի գյուղատնտեսությունը. — ընկերությունը
ոժանդակում է միայն անհատական տնտեսության դար-
գացման, թե՞ նա առաջին հերթին խրախուսում է տըն-
տեսության կոլլեկտիվ ձևերի զարգացումը, միաժամա-
նակ աջակցելով նաև անհատ տնտեսության աշխա-
տանքներին:

Ընկերության վարչությունը չի կարող կուրս վերց-
նել գյուղի ունևորի և կուլակի տնտեսություններին մե-
քենաներ և այլ անհրաժեշտ առարկաներ մատակարա-
րելու. դա միաձգամայն սխալ կլինի: Նա առաջին հեր-
թին պետք է ոգնի ավելի կարիք ունեցող տնտեսու-
թյուններին, քանի վոր այդ բղխում է կոոպերացիայի
հիմնական նպատակներից:

Հետևապես, ընկերությունն իր մատակարարման
աշխատանքներին նույնպես չպետք է մոտենա առև-
տրական տեսակետից: Մատակարարման աշխատանքը,
ինչպես և վարկայինը, գյուղատնտեսության արտա-
դրության բարձրացման, նրա կոլլեկտիվ հիմքերով վե-
րակառուցման հիմնական հենարաններից մեկն է հան-
դիսանում:

Ի՞նչ ձևով գյուղատնտեսական ընկերության վար-
չությունը կարող է ոգնել չքավորությանը մատակա-
րարման աշխատանքներում: Ի՞նչ պետք է նկատի ունե-
նա՞ ընկերությունն իր անդամներին մեքենաներ, գոր-
ծիքներ, սերմորայք և պարարտանյութեր մատակարա-
րելիս:

Մատակարարման ամբողջ աշխատանքը նախ և ա-
ռաջ պետք է ուղղված լինի գյուղացիության ամենա-
կարիքավոր շերտերի պահանջների բավարարման:
Ծրագիրը կազմելիս ընկերության վարչությունը հաշ-
վի պետք է առնի մեքենաների և այլ գործիքների պա-
հանջը չքավոր գյուղացիության կողմից: Այնուամե-
նայնիվ անդամների պատվերները ձևակերպելիս, կան-
խավճարների մուծման այնպիսի կարգ պետք է սահմա-
նել, վորը ամենամեծ արտոնություններ վերապահի

չքափորությանը, այն և՛ չքափորի կողմից մուծվելիք ավանսն ունեւորներէց անհամեմատ պակաս պետք ե լինի: Մի շարք ընկերութիւններում պատվերները ձեռակերպելիս, կանխավճարների խնդրում բոլոր շերտերի վերաբերմամբ ել միևնույն մտայնում ե տեղի ունենում: Չքափոր Սիմոնը փոցխի համար մտցնում ե կանխավճար տասնհինգ ուրբի, միջակ Հովհաննեսը նույնպես տասնհինգ ուրբի յե տալիս, նույնը և ունեւոր գյուղացի Պողոսը:

Միանգամայն ակներև և, վոր պատվերների ձեռակերպման այդ կարգը անիրավացի յե. յեթե այդ կարգն ունեւորի համար շատ հեշտ ե, միջակի համար տանելի, ապա չքափորի համար միանգամայն դժվար ե և նրա ուժից վեր, հետեապես և անտանելի: Չքափորը կամ պետք ե հրաժարվի փոցխ գնելուց, աշխատանքների ժամանակ սգալի հարուստ գյուղացու փոցխից և դրանով ունեւորից կախում ունենա, կամ ել փոցխը գնելու համար ստիպված պետք ե յինի իր տնտեսութիւնից մի վորևե բան ծախել: Իսկ չքափորի տնտեսութիւնն այն դրության և, վոր հազիվ թի հնարավոր յինի մի բան այնտեղից ծախել:

Ի՞նչ անել:

Ընկերութիւնը հաշվի առնելով իր անգամների գնողական տարբեր ունակութիւնը, տարբեր ել մտայնում պետք ե ունենա նրանց պատվերները ձեռակերպելու ժամանակ: Այլ կերպ ասած, ընկերության վարչութիւնը պետք ե բարձրացնի ունեւորից ստանալիք կանխավճարի չափը, և ընդհակառակը թույլ և չքափոր տնտեսութիւններինը պակասացնի, իսկ մուծելու համար հարկավոր ե սահմանել յերկու, յերեք ժամկետ այն հաշվով, վոր ինչքան հնարավոր ե շատ գյուրութիւններ արվեն չքափոր գյուղացուն անհրաժեշտ գործիքներ ձեռք բերելու:

Որինակ՝ վարչութիւնը պետք ե չքափոր Սիմոնից փոցխի համար կանխավճար վերցնի հինգ ուրբի, մի-

ջակ Հովհաննեսից՝ տասր ոււրլի, իսկ ունեոր Պոպոսից քսան—քսանհինգ ոււրլի:

Վերստուգիչ հանձնաժողովները պետք և հետեւն, վոր ալգպիսի տարբեր մտակցման ժամանակ բարեկամական, ազգակցական կապերը դեր չխաղան, այլ միակ յելակեա ունենան ավելի կարիքաւորներին ոգնելու անհրաժեշտութիւնը:

Մատակարարման աշխատանքների մեջ կարգ մտցնելու համար, ի նկատի ունենալով դյուղատնտեսութեան ուժեղ զարգացման անհրաժեշտութիւնը, և ձգտելով հեշտացնելու դյուղացիութեան կողմից դյուղատնտեսական ինվէնտարի և մեքենաների գնումը, Պորհրդային կառավարութիւնը մշակել և հատուկ վարկաւորման տախտակ՝ դյուղատնտեսական մեքենաների և գործիքների վաճառման համար: Այդ տախտակում նշանակված են մեքենաների գները և վարկաւորման ժամկետները: Վարկաւորման տախտակը պարտաւեր որենք պետք և լինի ընկերութեան վարչութեան համար:

Այդպիսով դյուղատնտեսական ընկերութեան վարչութիւնը մատակարարման աշխատանքների ժամանակ, իր որամագրութեան տակ ունի մեծ հնարավորութիւններ անտեսապես ոգնելու իր անդամներին, ոգնելու նրանց ազատվել շահաւործող տարերից, բարձրանալ զարգացման ավելի բարձր ստիճանի: Այդ հնարավորութիւնները կայանում են հետեյալում.

1. առաջին հերթին բաւարարելու չքաւորական տնտեսութիւններին մեքենաներով, գործիքներով, սերմերով և պարարտանյութերով.

2. պատվերների ձեւակերպման ժամանակ, մյուս կատեգորիաների համեմատութեամբ չքաւորներից ստացվող կանխավճարի ավելի պակաս գումար սահմանելը.

3. համեմատած վարկաւորման տախտակին, մեքենաների և գործիքների բաշխելու ժամանակ չքաւորների նկատմամբ ավելի յերկար ժամկետ սահմանելը և

4. չբավոր գյուղացիների համար վարձակայանի մեքենաներից ոգտովելու հնարավորութիւն ստեղծելը:

Սակայն մատակարարման աշխատանքների բնազաւ-
վառում այն բոլոր հնարավորութիւնները, վոչոնց մա-
սին ակցինք, վերաբերվում ե գյուղացիական անհատա-
կան տնտեսութիւններին: Մինչդեռ սկզբում մենք ըն-
դունեցինք, վոր ընկերութեան աշխատանքը չբավորի
ոչնութեան գործում պետք ե բղխի մանր-ցրված չբա-
վորական տնտեսութիւնները խոշոր կոլլեկտիվներում
ներգրավելու հիմնական յեղակետից, քանի վոր միայ-
նակ, մանաւանդ մանր գյուղացիական տնտեսութիւն-
ների համար զարգանալ ու բարձրանալ ավելի դժվար ե,
քան խոշոր, այն ել կոլլեկտիվ տնտեսութիւնները:

Ինչպես պետք ե վարվի ընկերութեանը մատակա-
րարման աշխատանքներում նաև չբավորներին սնդու-
թիւն ցույց տալու գործում: Ինչպես համաձայնեցնել
գյուղի չբավորի ոչնութեանը գյուղացիական տնտե-
սութեան կոլլեկտիվացման գծի հետ՝ մեքենաներ, գոր-
ծիքներ, սերմորայք ե պարարտանյութեր բաշխելու
ժամանակ:

Նախ՝ կոլլեկտիվների բոլոր պահանջներն ու պաա-
վերները պետք ե բավարարվեն անհատ տնտեսութիւն-
ների պատվերից առաջ. բացի այդ, բաշխման պայման-
ները (նախալծարը, վարկավորման ժամկետները) կո-
լլեկտիվ կազմակերպութիւնների համար պետք ե լինեն
ել ավելի արտոնյալ, քան անհատ տնտեսութիւննե-
րին:

Այդ յերկու ձեռնարկումներն արդեն կարող են ու-
ժանդակել կոլլեկտիվ կազմակերպութիւնների ե ար-
տեղների առաջացման ու զարգացմանը: Սակայն, բացի
այդ, ընկերութեան Վարչութիւնը պարտավոր ե խոշոր
գյուղատնտեսական մեքենաները բաշխել բացառապես
գոյութիւն ունեցող ե նոր կազմակերպվող կոլլեկտիվ
կազմակերպութիւններին: Անհատ տնտեսութիւնները
խոշոր մեքենաներ չպետք ե ստանան:

Ի՞նչու.

Սորհրդային իշխանութիւնը և Կոմունիստական Կուսակցութիւնը բոլորովին դեմ չեն անհատ տնտեսութիւնների զարգացմանը: Ընդհակառակը, Կետրոնական Կոմիտեի պլենումը (1928 թ. հուլիս) ամբողջ վճռականութեամբ ընդգծեց, վոր գյուղատնտեսութեան զարգացման խնդրում կուսակցութեան գիծը պետք է լինի հետեյալը.—

«Ապահովել մանր և միջակ գյուղացիական անհատական տնտեսութիւնների արտադրողականութեան հետադա բարձրացումն, վորոնք բավական ժամանակ դեռևս լինելու յեն յերկրի հատիկային տնտեսութեան բազան (դները, մեքենաները, հանքային պարարտանյութերը, լավ տեսակի սերմեր, ցանքսերի կոնտրակտացիան, հողաշինարարութեանը և այլն), ավելի ու ավելի ընդգրկելու նրանց կոոպերատիվ կազմակերպութիւնների ցանցում, աջակցելով գյուղացիական տնտեսութիւնների արտադրողական պրոցեսների միացման գործին: Յեշնելով գյուղացիական տնտեսութիւններին կոոպերատիվ շինարարութեան մեջ ներգրավելու բացահայտ անբավարար արդիւնքներից, հատկապես գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի գծով, պլենումն ամբողջ կուսակցութեան ուշադրութիւնն է հրավիրում լենինյան կոոպերատիվ պլանի պրակտիկ իրագործման աճող նշանակութեան վրա՝ անհատական գյուղացիական տնտեսութեան բերքատուութեան և ասպրանքայնութեան բարձրացման, ինչպես և նրան աստիճանաբար սոցիալիստական շինարարութեան հունի մեջ ներգրավելու գործում»:

Սակայն գյուղացիական անհատ տնտեսութիւններին տրակտոր, շոգեկալսիչ չպետք է մատակարարել, և դա չի հակասում Հ. Կ. կուսի Կենտկոմի վորոշումներին, սյլ ընդհակառակը կա լրիվ զուգադիպում: Կոմ. Կուսի և Սորհրդային Իշխանութեան ընդունած գիծը՝ անհատ տնտեսութիւնների վերականգնման և բարձրացման խնդրում՝ նկատի ունի չքավոր և միջակ գյուղացիական

տնտեսութիւնները, նկատի ունի նրանց պաշտպանութիւնը կուլակի ստրկացումից :

Կարո՞ղ են արդեօք անհատ չքավոր և միջակ տնտեսութիւնները գնել խոշոր գյուղատնտեսական մեքենաներ (տրակտոր կամ կալիք) : Վոչ չեն կարող, դրանց ուժից վեր ե :

Ապա վո՞ր տնտեսութիւնը կարող է գնել իր համար տրակտոր և կալիք մեքենա :

Միայն ուժեղ, կուլակային տնտեսութիւնները, վորոնք միջոցներ են կուտակել շրջապատի գյուղացիներին շահագործելով և վորոնք խոշոր գյուղատնտեսական մեքենա ձեռք բերելուց հետո ե՛լ ավելի կհավաքեն իրենց բոլոր գյուղացիներին, ել ավելի կշահագործեն նրանց :

Կոմ. Կուար և Պորհրդային իշխանութիւնը կարո՞ղ են թույլ տալ մեքենայի նման ոգտագործում : Իհարկէ վոչ : Այդտեղից ել միանգամայն պարզ է, թե ինչու խոշոր և թանգարժեք գյուղատնտեսական մեքենաներն անհատ տնտեսութեան չպետք է տալ : Բարդ գյուղատնտեսական մեքենաները պետք է տրամադրել բացառապէս կոլեկտիվ կազմակերպութիւններին՝ սկսած ամենահասարակից մինչև ամենարարդ ձևը :

ՎԱՃԱՌԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Վարկային և մատակարարման աշխատանքներից հետո, գյուղատնտեսական կոոպերացիայի հիմնական աշխատանքները հանդիսանում են վաճառահանման ու պերացիաները (գործառքները) :

Գյուղատնտեսական ընկերութեան խնդիրներից մեկն է՝ շահագրգռել իր անդամներին նրանց տնտեսութեան միջերքների ամենաձեռնառու վաճառահանմամբ :

Ամեն մի գյուղացի փոխանակ կաթը, բանջարեղենը, գամ հացը ծախելու համար հեռու քաղաք գնալու, այդ ածրողը հանձնում է նա գյուղատնտեսական ընկերութեան մոտակա ընդունման կայանին : Իսկ հետագա վա-

ճառահանումն արդեն ընկերութեան պարտականութեանն է:

Ընկերութեանը պետք է մերադաս համապատասխան կոտակերատիվ միութեան միջոցով ամենատնտեսավար, ամենաազնիվ կերպով իր անդամների միջերջները հասցնի սպառողին, և ժամանակին ճիշտ հաշիվ ներկայացնի միջերջ արտադրող իր անդամ-փայտերերին:

Վաճառահանումը կոտակերատիվ շինարարութեան մեջ շատ դեպքերում առաջին ոպերացիան է, վորի շուրջը համախմբվում են գյուղացի-արտադրողները: Պետք է ծախել խոտ: Ո՞ւմ ծախել... Ինչպես ծախել, քանիստ՞վ ծախել, — այդ բոլորը հարցեր են, վորոնց մենակ լուծելը հավաղանց դժվար է: Ծախել առևտրական միջնորդին. — նա քեզ կխարի և կմաքրազարդի. անուգուս և նրա հետ կապվելը:

Պետք է ծախել կաթի, յուղի ավելցուկը: — Նորից գյուղացու առաջ կանգնում է այն հարցն ու վախը, վորոնց պատահել ենք խոտի վաճառման ժամանակ:

Ակամայից ծնունդ է առնում համապատասխան ընկերութեան կազմակերպելու միտքը, իսկ հարցն ավելի հեշտ է լուծվում, յերբ մտաիկ շրջանում այդպիսի ընկերութեան կա և նա՛ աշխատում է լավ:

Վաճառահանումն ընկերութեան շուրջն է համախմբել գյուղացի արտադրողներին: Գյուղատնտեսական միջերջների՝ յուղի, կաթի խոտի և այլն արտելային ընկերային վաճառահանում կազմակերպելուց հետո առաջ են գալիս մատակարարման ոպերացիաները, այսինքն ցանկութեան է առաջանում ընկերութեան անդամների համար դնել միանգամից մի պարտյա գույքան կամ բարդ մեքենաներ՝ գյուղատնտեսական արտադրութեան համար:

Մատակարարման դործի կանոնավորումից հետո միտք է ծագում վարկային աշխատանքների մասին և գրա հետ միասին առաջանում է ազրոկուլտ աշխատանքների անհրաժեշտութեանը, քանի վոր ձեռնտու վաճա-

ուհանուժը պահանջում է մի շարք այնպիսի ձեռնարկումներ, վորոնք անհրաժեշտ են միժերքի քանակի և վորակի բարձրացման համար:

Այդպիսով կոտպերատիվ վաճառահանումը հանդիսանում է շլիժայի այն հիմնական ողակը, վորից բռնելով հնարավոր է գյուղատնտեսութունը տանել դեպի նրա հետագա զարգացման, լավացման և կոլեկտիվ հիմքերի փոխանցման կողմը:

Մենք գիտամար յերկու խոսքով կանգ առանք վաճառահանման ուղերայիայի եյության վրա, վոր անցնենք այն հարցին, թե ինչպիսի ոպնել չքավոր գյուղացուն՝ նրա գյուղատնտեսական արտադրության միժերքները վաճառելիս:

Գյուղատնտեսական բնկերության վաճառահանման ուղերայիաների բնույթապրումից (վոր քիչ վերև տվեցինք) յերևում է, վոր բնկերության վարչությունը կազմակերպելով գյուղական չքավոր և միջակ լայն մասսայի միժերքների վաճառահանումը, առաջին հերթին պետք է կազմակերպի չքավորության միժերքների վաճառահանումը: Այդ վոչինչ, վոր սկզբում չքավոր տնտեսությունների ապրանքայնությունն աննշան է: Հենց դրա համար էլ բնկերությունն ավելի ուշադիր պետք է լինի դեպի չքավորների այդ աննշան ավելցուկի վաճառահանումը: Ընկերությունը պետք է հող տանի այն մասին, վոր իր անդամների միժերքը վաճառի ըստ հնարավորին մեծ շահով, համենայն դեպս առանց վնասի, քանի վոր չքավոր տնտեսությունների համար ամեն մի կոպեկը շատ թանկ է:

Ընկերության վարչության այդ ուշադիր վերաբերմունքը՝ չքավոր անդամ-փայտերերի միժերքների վաճառահանման գործին, անշուշտ լավ կարող է անդրադառնալ տնտեսությունների զարգացման վրա, կարող է շահագրգռել այդ չքավոր տնտեսություններին՝ այս կամ այն միժերքը արտադրելու գործում, կարող է ոժանդակել ագրոկոլլտ աշխատանքների խորացմանը և, վեր-

ջապես կարող և ոժանդակել չքավոր տնտեսություններին կողքի կողմերի վրա կազմակերպելու մի վորևէ միջերջ արտադրելու համար: Կոոպերատիվ վաճառահանման հիմնական տարբերությունը սովորական վաճառքից կայանում է նրանում, վոր մի կողմից կատարվում է միջերջների բարեխիղճ ընդունելություն անանց խարբարյությունների, իսկ մյուս կողմից ստացած միջերջի դիմաց վերջնական հաշվեհարդարը կատարվում է վոչ թե անմիջապես, այլ միջերջը վաճառելուց հետո, ըստ վորում միջերջ հանձնող անդամը վերջնական հաշվեհարդարը ստանալիս, ստանում է նաև վաճառահանումից դոյացած շահը, դուրս գալով կոոպերնկերության կողմից այդ դործում կատարած ծախքերը: Այս տարբերությունը ստիպում է գյուղացիներին իրենց միջերջները հանձնել կոոպերատիվին, այլ վոչ թե մասնավոր դնորդին:

Ընկերության վարչությունը պետք է ձգտի, վոր կոոպերատիվ վաճառահանումը ամենից ուժեղ արտահայտի չքավոր տնտեսություններին հասանելիք կոոպերատիվ վերավճարը պետք է վերադարձվի առաջին հերթին և ըստ հնարին առանց պահումների կոոպերատիվի ոգտին, կամ պահելով չնչին գումարներ:

Մի շարք ընկերություններում վոչ կոոպերացված չքավորներին շահագրգռելու և կոոպերատիվ շինարարության մեջ ներգրավելու նպատակով, նրանց ել կոոպերատիվ անդամներին հավասար տրվում է կոոպերատիվ վերավճար, յեթե նրանք իրենց միջերջը վաճառահանել են: Կոոպերատիվի միջոցով (վոչ կոոպերացված գյուղացիներին տրվող կոոպերատիվ լրացուցիչ վճարը կոոպերացվածներից յերկու անգամ պակաս է լինում): Սակայն կոոպ. վերավճարը լրիվ տրվում է այն պայմանով, յեթե գյուղացին անդամագրվում է կոոպերատիվին և ստացված գումարի մի մասը մտցնում է ի մարումն իր մուտքի վճարի և փայավճարի:

Նման միջոցների ձևոնարկում պետք է տաաջարկել
 գյուղատնտեսական կոոպերացիայի ամբողջ սխեման ին :
 Դա ոչալ միջոցն է, վստով կոոպերատիվը արագ թափով
 կարող է տանել չքավոր գյուղացիներին անդամագրումը
 և գործնականում ոգնել նրանց անտեսական զարգաց-
 մանը :

Բացի այս, վաճառահանման գործառքների ժամա-
 նակ ընկերության Վարչությունը կարող է և պարտա-
 վոր և հատուկ շահարեք պայմաններ ստեղծել կոլլեկտիվ
 կազմակերպությունների մթերքները վաճառահանելու
 համար : Այդ արտոնությունները նորից մի խրախուսիչ
 փաստ կզանան չքավորներին կոլլեկտիվում կազմա-
 կերպելու, քանի վստ չքավորի համար շատ դժվար է
 դարգանալ անհատ անտեսության ճանապարհով :

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր վաճառահանման
 գործառքները կարող են սղնել վոչ միայն անհատ չքա-
 վոր անտեսությունների պարգացման, այլ և ոժանդա-
 կել նրանց միացման կոլլեկտիվներում : Ինական է, վոր
 ընկերությունը, հոգ տանելով տաաջին հերթին չքավոր
 անտեսությունների մասին, վոչ մի բոպե չպետք է աչ-
 բաթոց անի միջակ գյուղացու մթերքի բարեխիղճ և ու-
 չապիր վաճառահանումը :

Կ Ո Ն Տ Ր Ա Կ Տ Ա Յ Ի Ա

Գյուղկոոպերացիայի աշխատանքում վերջին ժա-
 մանակներս բացատիկ նշանակություն է ստանում մի
 ձևոնարկում, վորը կոչվում է կոնտրակտացիա :

Ի՞նչ է կոնտրակտացիան .

Կոնտրակտացիան յերկկողմանի պայմանադիր է,
 վորը փոխադարձ համաձայնության հիմունքներով
 կնքվում է անհատ անտեսության կամ գյուղացիական
 կոլլեկտիվի և թորհրդային պետության միջև : Պետու-
 թյունն իր կողմից պարտավորվում է կոլլեկտիվին կամ
 անհատ անտեսությանը տալ իր համար կարևոր մթերքի
 արտադրության անհրաժեշտ միջոցները՝ մեղակներ,

սերմորայք, պարարտանյութ, դրամ, ազրոզնություն, հացահատիկ, արդյունարեբական սպրանքներ և այլն:

Իսկ գյուղացին, կամ գյուղացիական կոլլեկտիվին իր հերթին, դրա փոխարեն պարտավորվում և վորոշ տարածութեան վրա ցանել պետութեան անհրաժեշտ բույսը, այն և՛ հացահատիկ, բամբակ, ծխախոտ և այլն. ստացված բերքի մի մասը վորոշված գնով և պայմանավորված տեղում հանձնել պետութեան, մտցնել իր տնտեսութեան մեջ բարեփոխումներ, վորոնք կբարձրացնեն տվյալ բույսի սպրանքայնութեանը կամ մինչև անգամ կօժանդակեն ամբողջ տնտեսութեան վերակառուցման: Պայմանագիրը չխախտելու համար յերկու կողմերի համար պարտադիր տուգանք և սահմանվում:

Այս և կոնտրակտացիայի ելությունը: Դրանից արդեն իսկ յերևում և, թե ինչպիսի խոշոր ուժ կարող և լինել կոնտրակտացիան խորհրդային պայմաններում: Կոնտրակտացիայի սղնութեամբ, կնքված պայմանագրի սղնութեամբ՝ պետութեանը կարող և վճռականորեն առաջ մղել չքավոր-միջակային հիմնական մասսային վոչ միայն գյուղատնտեսութեան արտադրողականութեան և սպրանքայնութեան բարձրացման ուղղութեամբ, այլ և գյուղի հիմնական վերակառուցման, գյուղատնտեսական արտադրութեան կոլլեկտիվացման ճանապարհով:

Պայմանագիր կնքելիս ընկերութեան վարչութեանը շատ խնամքով հաշվի յե առնում պայման կապել ցանկացողներին:

Առաջին հերթին պետք և հաշվի առնել չքավոր տնտեսութեանները, վորոնք զբաղվում են տվյալ միջերգի արտադրութեամբ:

Չքավոր տնտեսութեաններին համար պետք և լինեն (գործնականում այդպես ևլ կա) ավանսների բարձրացրած նորմաներ, արտադրական միջոցների առավել մատակարարում (սերմորայք, մեքենաներ, պարարտանյութ և այլն):

Զբաղմանը թյուրն իր հերթին պետք է վորոշակի պարտավորութիւն վերցնի վոչ միայն հողի վորոշ տարածութիւնը պայմանագրով նախատեսուած բույսը ցանելու, այլ և անտեսութեան մեջ մտցնելու պայմանագրում նախատեսուած բարեփոխումները: Դա միանգամից կրարճացնի չբաղման անտեսութիւնը, հնարավորութիւն կտա վերջինին կանգնելու ամուր արտադրական հիմքերի վրա: Դրա հետ միասին կոլլեկտիվ անտեսութիւններէ համար, ընկերութիւնը պետք է ունենա հատուկ ձևի պայմանագիր: Դրանց համար անհրաժեշտ է նախատեսել ավելի շատ արտոնութիւններ, քան անհատ անտեսութիւններին, թեկուզ հենց չբաղման:

Կոլլեկտիվներին պետք է իրավունք վերապահվի թե կանխիկ դրամ և թե մեքենաներ ստանալու հերթից դուրս: Ազրո-ոգնութիւնը նույնպէս ցույց է տրվում հատուկ ուշադիր և ուժեղացրած կարգով:

Մի խոսքով պայմանագիր-կոնտրակտացիա կնքելիս, ընկերութեան վարչութիւնը պետք է ամեն ինչ անի, վորպէսզի ցուց տա գյուղացիներին կոլլեկտիվացման առավելութիւնները (չըջակա գյուղացիութեան լայն չափով պետք է իւրագեկ դարձնել և հասկանալի ձևով պատմել կոնտրակտացիայի և կոլլեկտիվներին տրվող առավելութիւններէ մասին):

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԶՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախընթաց գլուխներում խոսեցինք այն մասին, թե ինչ կարող է անել գյուղատնտեսական ընկերութիւնը չբաղման ոգնութեան բնագավառում: Մենք տեսանք, վոր ընկերութեան հիմնական ոպերացիաները՝ վարկային, մատակարարման և վաճառահանման, կարող են և պետք է ընթանան գյուղատնտեսական ընկերութեան մեջ գլխավորապէս չբաղման շահերի պաշտպանութեան ուղիով: Սակայն սխալ կլինէր մտածել, վոր ինքը չբաղմանը վոչինչ չպետք է անի,

միայն սպասի Սուրհրդային իշխանության հրամաններով ընկերութեան կողմից նրան արվելիք բարիքներին: Ինքը, չքափորությունը պետք է կազմակերպվի և համախմբվի կոոպերատիվ ընկերութեանում, անրնդհատ ուղղի նրա վաչութեան աշխատանքներն աշխատանքի, վոր ընկերութեան ամբողջ աշխատանքը բնթանա հոգուս չքափորութեան և միջակների:

Կոոպերացիամ և վոչ կոոպերացիամ գյուղական չքափորութեան մեջ ամբողջ կազմակերպչական աշխատանքները տարվում և Համամիութենական Կոմ. Կոոպակցութեան (բ.) տեղի կազմակերպութեանների կողմից: Չքափորութեան կազմակերպման և համախմբման աշխատանքը նույնպես տարվում և կուս. կազմակերպութեանների կամ առանձին կոմունիստների ու կոմյերիտականների կողմից՝ անզական կուսկազմակերպութեան հանձնարարութեամբ և ղեկավարութեամբ: Կոոպերացիամ չքափորութեան կազմակերպման ամենապարզ ձևն և չքափորութեան խորհրդակցութեանները:

Այդ խորհրդակցութեաններում քննվում և վարչութեան գործունեութեան վերաբերյալ զանազան հարցեր, քննվում և վարկերի բաշխման, մատակարարման, վաճառահանման, չքափորութեան կոոպերացման, կուլթիկտիվացման և գյուղատնտեսական ընկերութեանների վարչական մարմինների հետագա վերրնորութեաններին վերաբերյալ հարցեր:

Այդպիսով կոոպերացիամ չքափորութեանը մինչև փաշտակների ընդհանուր ժողովը, Կոմ. Կուսի ղեկավարութեամբ պարզում և, ի հաշտ և բերում իր վերաբերմունքն ընկերութեան աշխատանքի ձևնարկման և ընկերութեան վարչական մարմինների կազմի նկատմամբ: Ժողովներում նրանք հնարավորութեան կուսենան հանդես պարտավելի կազմակերպված: Նման դեպքում չքափորը ավելի մեծ ազդեցութեան կունենա ընդհանուր ժողովի վորոշումների նկատմամբ, քան յեթե նախորդ չքափորական վոչ մի խորհրդակցութեան կազմակերպ-

ված շլիններ և նրանք վոչինչից անդյակ շլինեյին: Չքա-
վորական խորհրդակցություն հրավիրելու նպատակն
այն և, վոր նախապատրաստի ընդհանուր ժողովում ըն-
դունվելիք վորոշումները այնպես, վոր դրանք վոչ մի-
այն համապատասխանեն չքավորութեան, այլ և միջակի
չահերին, միացնելին միջակին ու չքավորին՝ գյուղի
հոյրակային և շահագործող մասին հարվածելու համար:

Չքավորութեան խորհրդակցութեան կողմից նշված
ճիշտ վորոշումները միշտ ել կստանան միջակների հա-
վանությունն ու պաշտպանությունը և դրանով իսկ խո-
չոր չափով կվերացվի կուրակի ազդեցութեան հնարավո-
րությունները կոտակերատիվ ընկերութեան աշխատանք-
ների վրա:

Այսպիսով միանգամայն պարզ և չքավորական խոր-
հրդակցությունների անհրաժեշտությունը և ոգտավե-
տությունը: Համենայն դեպս կոտակերացիայի համար
պարտադիր և հրավիրել այդ խորհրդակցությունները
աարին յերկու անգամ, ընկերութեան վարչութեան հաշ-
վետու գեկուցման նախորելին:

Չքավորական խորհրդակցություն հրավիրելու ժա-
մանակ պետք և հիշել, վոր նախ խորհրդակցությունը
հրավիրվում և ղեկավարվում և Հ. Կոմունիստական Կու-
սակցութեան տեղի կազմակերպութեան կողմից, յերկ-
րորդ՝ խորհրդակցութեան դռները բաց պետք և լինեն մի-
ջակների առաջ, և վոր այդ խորհրդակցությունների վո-
րոշումները վոչ մի կերպ չպետք և հակասեն միջակների
չահերին:

Կարող և հարց ծագել, թե ինչո՞ւ անպայման ան-
հրաժեշտ և այդ խորհրդակցությունների ղեկավարու-
թյունը կենտրոնացնել Կոմ. Կուսակցութեան տեղի կազ-
մակերպութեան ձեռքում: Հարցը շատ պարզ և: Կոմու-
նիստական Կուսակցությունն և միայն, վոր հանդիսա-
նալով պրոլետարիատի և չքավոր գյուղացիութեան ա-
մենագիտակից, առաջադեմ և քաղաքականապես դրա-
վետ մասը, կարող և պաշտպանել, ցրված, անկազմա-

կերպ, հետամնաց, քաղաքականապէս վուշ բախական, պատարհարակված չքաղորութեանը կույակի ազդեցութեանից, կարող ե ցույց տալ չքաղոր պշուղացիութեանը նրա իսկական ճանապարհը, ստաջազբել նրա շահերին համապատասխանող և միջակի հետ դաշինքն ալիելի ամբապնդող վորոշումներ:

Ինչ վերաբերում ե յերկրորդ հանգամանքին, միջակի ստաջ գոները բացելուն և այլ խորհրդակցութեանները վորոշումները միջակի շահերին շահակարելուն, սպա այս բացատրվում և ալիելի պարզ. — անհրաժեշտ և անընդհատ ամբացնել և ուժեղացնել պաշինքը միջակ պշուղացիութեան հիմնական մաստայի հետ:

Չքաղոր պշուղացիութեանը հանգիստում և շկոմ. կուսակցութեան ամենասամուր հենարանը պշուղոմ: Սակայն թե հեղափոխութեանը և թե սոցիալիստական շինարարութեանը հաջողութեամբ կախարտվեն այն պեպքում, յեթե պշուղի հիմնական մաստան-միջակ պշուղացիութեանը մեր հուսալի պաշնակիցը լինի: Կոմ. կուսը միշտ ու անշեղորեն կրկնում և իրականացնում և վ. Ի. Լենինի կտակը այն մասին, վոր անհրաժեշտ և միջակ պշուղացու հետ ամբացնել պաշինքը՝ կույակի պեմ միտսին պայքարելու համար:

ՉՔԱՎՈՐԱԿԱՆ ԽՍԱՎԿՆԵՐ

Չքաղորական խորհրդակցութեանն անշուշտ սպաավետ և չքաղորութեան շերտի պաշտպանութեան համար անհրաժեշտ կազմակերպութեան և: Բայց խորհրդակցութեանները շեն կարող մշտապէս ազդել ընկերութեան ստորյա աշխատանքների վրա, համեմատաբար մեծածախ լինելու պատճառով: Յեթե ընկերութեանն ունի մոտ հազար անդամ, նրանցից ստնվապն յերեք-չորս հարյուրը չքաղորներ են, իսկ պշուղում այդ քանակութեամբ մարդկանց ժողովի հրավիրել այնքան ևլ հեշտ ան շե: Մինչդեռ, անհրաժեշտ և, վոր չքաղորութեանն ամեն ժամանակ անընդհատ ազդեցութեան ունենա ըն-

կերութեան աշխատանքները վրա: Դրա համար կոմ-
կուսի կողմից կոտակերատիվների խորհրդներին, գյուղ-
փոկերին կից կազմակերպվում և այսպէս կոչվող շքափո-
րական խմբակներ: Կոտակերատիվին կից կազմակերպվող
շքափորական խմբակի մեջ փորպէս կանոն մտնում են
Վարչութեան, Վերատուգիչ Հանձնաժողովի և Խորհրդի
շքափոր անդամները: Բացի այդ, խմբակի մեջ մտնում
են նաև մարմինների կազմում աշխատող կոմունիստ-
ները և կոմյէրիտականները, ապա մասնակցում են այն
շքափորները, փորոնք թեև զեկաւարտող մարմինների
կազմում չեն, բայց ցույց են տվել իրենց գիտապից և
ակախի մասնակցութեանը հասարակական աշխատանք-
ներում:

Չքափորական խմբակները, ինչպէս նրանց կազմն և
ցույց տալիս, ավելի ձկուն են և ավելի հաճախ կարող
են համարվել, քան շքափորական խորհրդակցութեան-
ները: Չքափորական խմբակի խնդիրներն են՝ ազդել ընկե-
րութեան ասորչա աշխատանքները վրա և հետևել, վոր
այդ աշխատանքները չհակասեն շքափորի ու միջակի
չահերին, ողնել կոմունիստական կուսակցութեանը՝
նրա քաղաքական գիծն ու ձեռնարկումներն իրազործե-
լու համար: Բացի դա, շքափորական խմբակի խնդիրն և՛
բարձրացնել շքափորի ակախութեանը, ամբացնել կա-
պր միջակի հետ և պայքարել կուրակի շահագործման
դեմ:

Չքափորական խմբակի նիստերը հրավիրվում են
կանոնավոր և ամիսը աննվազը մեկ անգամ: Այդ նիս-
տերում քննվում են ընկերութեան աշխատանքին վերա-
բերվող գործնական խնդիրները, նույնն ինչ վոր շքափո-
րական խորհրդակցութեաններում:

Ժողովին զեկաւարտում կամ նախազանում և ընկե-
րութեան զեկաւարտող մարմինները (Վարչութեան, Խոր-
հրդի կամ Վերատուգիչ Հանձնաժողովի) անդամներից
մեկը:

Խմբակի փորոշումները կիրառվում են կյանքում

միայն ընկերութեան վարչութեան կողմից հաստատվելուց հետո: Չքաղութական խմբակները վոչ մի դեպքում չպետք է խլեն Վարչութեան Ֆունկցիաները: Նրանք կոմունիստական կուսակցութեան ֆրակցիաների նման կարող են ազդել վարչութեան գծի վրա չքաղութի և միջակի շահերի տեսակետից: Այդ բանը լավ պետք է հիշի խրմբակի ամեն մի անդամ:

Չքաղութական խմբակը կազմակերպվում է այն ընկերութեաններին կից, վորոնց վարչութեան կազմում կա թեկուդ մեկ չքաղութ:

Իսկ յեթե վարչութեան կազմում չկա վոչ մի չքաղութ, խմբակ չի կազմակերպվում, այլ կանոնավոր կերպով հրավիրվում են վաշատեր չքաղութների խորհրդակցութեաններ: Այն ընկերութեաններում, վորտեղ ղեկավարող մարմինների, մասնավորապես վարչութեան կազմի մեծ մասը կոմունիստներ կամ կոմյերիտականներ են, նույնպես չեն կազմակերպվում չքաղութական խրմբակներ, յենթադրելով, վոր կոմունիստ և կոմյերիտական աշխատակիցները կարող են բավականաչափ պաշտպանել չքաղութեան շահերը: Նման ընկերութեաններում հրավիրվում են միայն ընդհանուր չքաղութական խորհրդակցութեաններ:

Պետք է նկատի ունենալ, վոր չափազանց նպատակահարմար է չքաղութական խմբակի նիստերին հրավիրել նաև ընկերութեան ղեկավար մարմինների կազմից այն միջակներին, վորոնք իսկապես ակտիվ են ու չքաղութ գյուղացու վստահելի բարեկամը և գործնականում ապացուցել են իրենց պատրաստականութեանը պաշտպանելու չքաղութեան և բատրակութեան շահերը:

Չքաղութական խմբակները կազմակերպելիս նույնպես պետք է նկատի ունենալ, վոր նրանք ձևակերպվում և աշխատում են բացառապես կոմունիստական կուսակցութեան տեղի կազմակերպութեան նախաձեռնութեամբ ու ղեկավարութեամբ:

ԿՈՒՆՏ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՅԵՎ ԶՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսական ընկերութեան Վարչութիւնը յերբեք չպետք է մոտանա, վոր չքավորութիւնն ու բաւրակութիւնը գյուղի ավելի հետամնաց, ավելի մ'ութ մասն են յեղել և զեռ գգայի չարավ աշգպիտին ել մ'րում են:

Մինչև Հոկտեմբերեան հեղափոխութիւնը, գյուղի այդ շերտն յենթակա լինելով ամենաուժեղ ճնշման, ամենից քիչ հնարավորութիւններ և ունեցել բարձրացնելու իր կուլտուրական մակարդակը, ձեռք բերել գիտելիքներ: Հոկտեմբերեան հեղափոխութիւնն այդ բոլորը հիմքից ջնջեց և դասավորեց այլ կերպ: Զքավոր-բաւրակային շերտը դարձավ գյուղի զեկավարը:

Քաղաքացիական կռիւների տարիներում, յերբ Խորհրդային Հանրապետութիւնը պաշտպանվում էր կապիտալիստներից, կալվածատերերից և կուլակներից, գյուղի չքավորները և բաւրակները քաղաքի բանվոր-պրոլետարների հետ ասաջինք մտան Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի առաջավոր շարքերը: Կռիւները վերջնաւրջ հետո, խաղաղ սոցիալիստական շինարարութեան Փրոտնում զեկավարող դերը նույնպէս գյուղացի չքավորները և բաւրակները վերցրին:

Սակայն չքավոր-բաւրակային շերտերում այդպիսի առաջագեմ մարտիկների հետ միասին կան զգալի քանակութեամբ հետամնաց գյուղացիներ: Կամունիստական կուսակցութեան, ԽՍՀՄ-ի իշխանութեան և Գյուղատնտեսական կոոպերացիայի խնդիրներն են՝ բարձրացնել այդ հետամնաց շերտի թե տնտեսական և թե կուլտուրական մակարդակն ավելի բարձր աստիճանի վրա:

Տնտեսութեան վերելքն ավելի բարձր աստիճանի հնարավոր է միայն բաւրակների և չքավորների կուլտուրական մակարդակը բարձրացնելով: Այդ պատճառով կոոպերատիվ ընկերութեան վարչութիւնը պետք է

կապվի ժողովրդական Լուսավորութեան անդի մարմիններին հետ՝ միասնական ուժերով չքավորների և բարակների շարքերից անգրագիտութեանը վերացնելու համար:

Բացի այդ, Վարչութեանը մոտակա խրճիթ-ընթերցարանում այլալ շրջանի մյուս կոտպերատիվ կազմակերպութեանների հետ միասին ունենում և կոտպերատիվ անկյուն, վորին կից կազմակերպվում և կոտպերատիվ շինարարութեան ուսումնասիրութեամբ զբաղվող կոտպերատիվ խմբակ: Չքավորական խմբակը պետք և այդ կոտպերատիվ խմբակներում ունենա կոտպերատիվ անդամ ակտիվ չքավորների ու բարակների: Վարչութեանը և չքավորական խմբակը ամեն կերպ պետք և աջակցեն կոտպ. խմբակներում սովորող իրենց չքավոր և բարակ անդամներին, գնելով նրանց համար անհրաժեշտ գրականութեան, գրենական պիտույքներ և այլն:

Վերջապես գյուղատնտեսական բնկերութեան վարչութեանը և նրան կից չքավորական խմբակը շահագրգռված են վոր միայն մեծահասակ չքավորների ու բարակների անգրագիտութեան վերացմամբ, կուրուրական մակարդակի բարձրացումով, այլ նաև նրանով, վոր յերիտասարգ սերունդը, չքավորների յերեխաները հնարավորութեան ունենան դպրոցներ հաճախելու և զբաղիտութեան սովորելու:

Մենք գիտենք, վոր չքավորների յերեխաները շատ ժամանակ չեն հաճախում դպրոց՝ չոր, կոշիկ կամ դասագրքեր չունենալու պատճառով: Ընկերութեան վարչութեանը ծանոթ լինելով անդամների տնտեսական դրութեանը, նրանց սուր կարիքի դեպքում պետք և ոգնութեան ցույց տա չքավորների յերեխաներին: Հասկանալի յե, վոր ընկերութեան վարչութեանը մոռացութեան չպետք և տա և մյուս անդամների կուրուրական զարգացման խնդիրը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՎՈՒՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՎ ԶՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսական ընկերութեան, մանաւանդ մասնագիտական ընկերութեան (կաթնատնտեսական, ծխախտաողորձական և այլն) վարչութեանը բացի կուլտուր-կրթական աշխատանքներից, պետք է զբաղվի և ագրո-կուլտուր աշխատանքների, վերոնք կնպաստեն ընկերութեան անդամների անտեսութեան զարգացման, բերքատութեան բարձրացման և գյուղատնտեսական միջերկրների վերակի լավացման:

Ագրո-կուլտուր աշխատանքները տարվում է մտափորձապես հետևյալ ձևերով. ագրոնոմը կոոպերատիվ անդամներին անհրաժեշտ խորհուրդներ և տալիս, անդամ-փոխատերերի գաշտերում կազմակերպում է ցուցադրաշտեր, փորձադաշտեր, հիմնում է ագրոնոմիական գիտելիքների դանադան ճյուղերի վերաբերյալ դասընթացքներ, ագրո-արտադրական բնույթի ձեռնարկներ, (սերմադրիչ կայաններ, նախնական վերամշակման կետեր, ստացատներ և այլն), ինչպես և կոնտրակտացիայի ձևով գյուղատնտեսական այս կամ այն կուլտուրայի ցանքեր:

Այս աշխատանքներում նույնպես առաջնութեան պետք է տրվի գյուղական չքավորական ու բառրակային ավելի հետամնաց շերտերին:

Վարչութեանը ի նկատի պետք է ունենա, վեր ագրոնոմը կոոպերատիվ անդամների անտեսութեանը շրջելիս, պարտավոր է լավ ծանոթանալ, համապատասխան խորհուրդներ տալ, թե ինչպես տանել աշխատանքը՝ կարելի է ճիշտներեց արագ ազատվելու համար: Վարչութեանը պետք է հրահանգի ագրոնոմին առաջին հերթին փորձադաշտեր կազմակերպելու չքավորների անտեսութեան մեջ: Իր հոգիքում փորձ-ցուցադրական դաշտ ունենալու դեպքում չքավորը կտեսնի, թե ինչպես պետք է մշակել հողը՝ լավ բերք, լավ վորակի միջերք ունենալու համար:

Կուրսեր կազմակերպելիս Վարչությունը յուշնպես առաջին հերթին տեղեր և հատկացնում չքավորներին: Երանք առաջինը պետք և գյուղատնտեսական գիտելիքներն սովորեն՝ իրենց անտեսությունն ասողջացնելու համար:

Արտադրական ձեռնարկներ կազմակերպելիս, Վարչությունը չքավոր անդամներին հրավիրում և աշխատանքի, վորպես բանվորական ուժ, իսկ հետո ձեռնարկի գործնելիության ընթացքում աշխատողների կարիք լինելու դեպքում, Վարչությունը տեղի պրոֆեսիոնալ կազմակերպության հետ համաձայնեցնելով հրավիրում և յուշնպես չքավորին: Յեւ վերջապես՝ ձեռնարկը առաջին հերթին սպասարկում և չքավորներին, այն եւ արտոնյալ պայմաններով:

Յեթե վարչությունը անցնէ կացնում կոնտրակտացիա, ապա յուշնպես կոնտրակտացիան առաջին հերթին կնքվում և չքավոր անդամ-փոխադիրը հետ, վորին արվող ավանսի չափը մյուս խավերից պետք և ավելի բարձր լինի:

Այդ բոլոր ձեռնարկումները, յեթե գործնականորեն անցկացվեն չքավոր գյուղացիների անտեսություններում, անշուշտ կարճ ժամանակվա ընթացքում դրական արդյունք կստացվի: Թե միայնակ և թե ատանձնապես արտելային չքավորական անտեսությունները կարող են համեմատած կարճ ժամանակամիջոցում ամբողջ և վոտքի կանգնել:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԴՐԵՐԸ ՅԵՎ ԶՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի գյուղատնտեսական ընկերությունում գոյություն ունին մի շարք պաշտոններ, վորոնց համար հրավիրվում են վարձու ծառայողներ: Այդ պաշտոններն են՝ պահեստապետ, մթերքներ ընդունողներ, պանրի և յուղի վարպետներ, ընկերության ատանձին կետերի վարիչներ և այլն:

Շատ հաճախ այդ պաշտոններում աշխատում են այնպիսի մարդիկ, վորոնք ընդհանրապես խորթ են

դ յուզացու անտեսութեանը, կամ եւ անցյալի մարդկանցից, որինակ՝ խանութպաններ, առևտրական միջնորդներ, կարթածատերեր և այլն: Նման ծառայողները շատ հաճախ վաղ միայն չեն նպաստում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմանը, այլ ընդհակառակը խոչընդոտ և հանդիսանում:

Վարչութիւնը և չքավորական խմբակը (վորտեյ այգուլխին կա) ընկերութեան ասպարատը կողմակերպելիս, գյուղացու հետ անմիջական շփում ունեցող աշխատակիցներ ընտրելիս, պետք և հրափիրի այնպիսի մարդկանց, վորոնք յայլ ծանոթ են գյուղացիութեանը, վայելում են չքավոր և միջակ լայն մասսայի վստահութիւնը, վորձված են հասարակական աշխատանքներում, գործնականում ասպացուցել են խորհրդային պետութեան կողմնակից լինելը և, վերջապես կարողանում են պաշտպանել չքավորի և միջակի շահերը հանդեպ կուլակի:

Այլ կերպ ասած, Վարչութիւնն այդ պաշտոններում պետք և առաջ քաշել այնպիսի չքավոր գյուղացիներին, վորոնք ընդունակ են հանձնարարված աշխատանքը կատարելու:

Վարչութիւնը վերապաս միութեան կողմից կողմակերպվող կոոպ. աշխատավորներին վերադարձնող աման կուրսերում պետք և առաջադրել իր թեկնածուները սովորելու համար:

Գյուղատնտեսական ընկերութեան վարչութիւնը միայն այգուլխի քաղաքականութեամբ կապահովի ապարատի խիական կապը չքավոր ու միջակ գյուղացիութեան լայն մասսաներին հետ, կապահովի գյուղացիութեան այդ խավերի վստահութիւնը դեպի կոոպերատիվը, կապահովի նրա գործնելիութեան հաջող զարգացումը և յաճելու գյուղատնտեսական կոոպերացիայի առաջ կանդնած հիմնական խնդիրները, այն և՛ բորձրացնել մեր գյուղի գյուղատնտեսական արտադրութիւնը և փոխանցել նրան կոլեկտիվացման ուխտի վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՁ

| | |
|--|----|
| 1. Գյուղատնտեսական կոոպերացիայի հիմնական նպատակներն ու խնդիրները | 3 |
| 2. Հիմնական դիրքավորումը չքավորութեան նյութականտնտեսական ողնության ժամանակ | 10 |
| 3. Գյուղատնտեսական կոոպերացիայի առաջին խնդիրը չքավորութեան մեջ տարվելիք աշխատանքներում — չքավորութեան կոոպերացումն է | 1 |
| 4. Նյութականտնտեսական ողնությունը չքավորութեան | 16 |
| 5. Կազմակերպչական աշխատանքը չքավորութեան մեջ | 35 |
| 6. Կուլտ-կրթական աշխատանքները և չքավորությունը | 41 |
| 7. Գյուղատնտեսական լճակերութեան ազդեցությունը աշխատանքը և չքավորությունը | 43 |
| 8. Կոոպերատիվ կազմերը և չքավորությունը | 41 |



 ՀԵՍՏ ԳԻՏ: ԻԹՅՈՒՆՆԵՐԻ
 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
 ԳՐԱԴԱՐԱՆ N 2
 ԱԿԱԴԵՄԻԱ

2-1-1914
2
2
2-1-1914



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003497

ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

154.

II
A 23599